

վայրներ գտնուում և որտեղ այրեր, որտեղ լեռներ և բլուրներ, գետեր և առուակներ, անտառներ և աղբիւրներ, աւազաններ և լճակներ, նաւակներ և նաւեր, մինչև իսկ որտեղ արմաւենիներ և բանաններ, Այս հետաքրքիր քարտեզը շուտով առաջին անգամ լոյս կը տեսնէ Գերմանիայում:

* *

Էին Աթէնքի յատակագիծը ճշգիւ որոշելու արգելք է լինում ցայժմ այն հանգամանքը, որ Ակրոպոլսի հիւսիս-արեւմտեան առապարին անմիջապէս կից տարիներ առաջ բնակութիւն էին հաստատել Անաֆի կղզուց գաղթած որմնագիրներ և ոչ մի պայմանաւ չէին համաձայնում տեղից շարժել: Եունական Հնագիտական ընկերութեան յաջողուել է այժմ խաղարկութեան միջոցաւ մի խոշոր գումար ձեռք բերելով յիշեալ որմնագիրների համար մի նոր բնակութեան տեղ գնել, ուր և կը փոխադրուին նորա շուտով. իսկ հին բնակավայրում եկող աշնանից պեղումներ կսկսուեն:

* *

Աշխարհիս ամենահիւսիսային լրագիրն է այժմ Շպիցերգիկի րերը, որ սկսել է նորերս լոյս տեսնել այդ հեռաւոր կղզու վերայ և որի բոլոր յոգուածներն այդ կղզուն են վերաբերում:

* *

Մի բոուցիկ ցուցանանդեա է ձեռնարկուում այժմ Միացեալ Նահանգների հարաւ-արեւմտեան մասի և Մեքսիկայի համար, որ տեղի կունենայ երկաթուղու մի երկար, սովորականից աւելի բնդարձակ կառքերից բաղկացած, գնացքի միջոցաւ: Այդ գնացքը պէտք է ճ ամիս ծանապարհորդէ և 16,000 կիլոմետր ծանապարհ կարէ, կանգ առնելով մեծ քաղաքներում: Վառքերի մէջ տեղաւորուած ապրանքները գործարանների ներկայացուցիչների ձեռքով գուրս կը տարուին և վրանների տակ ի ցոյց կը դրուին, աւելի կամ պակաս ժամանակով, նայած տեղի կարեւորութեանը:

* *

Ֆրանսիացի մի բժիշկ իւր նոր հրատարակած բրօշիւրով հաստատում է, որ օլեանդր քոյսի արտաշնչութիւնը գիշեր ժամանակ վնասակար է ոչ միայն երբ ծաղկած է այն, այլ նաեւ երբ տերեւներն են միայն:

* *

22 տարի առաջ մի կալուածատէր փորձ է արել հարաւային Անգլիայում խաղողի այգիներ տնկել: Փորձը ցոյց է տուել, որ որոշ տեսակի որթեր յաջողութեամբ աճում են այդտեղ և լաւ արդիւնք են տալիս:

— 37 —

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՄԱՅՐ ԱԹՈՐ.

Տ. ԵՐԵՄԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԱՀԸ ԵՒ ԹԱՂԱԹԸ.



Նոյեմբերի 3-ին, առաւօտեան ժամը 8-ին ի Տէր հանգեաւ Ս. Ըջմիաճին Սինօզի աւագ անդամ և Ս. Հոսիսիմէի վանքի վանահայր Տ. Երեմիա Արքեպիսկոպոսը: Հանգուցեալ Սրբազանը տկարացել էր հինգշաբթի հոկտեմբերի 30-ին մրսելուց և հետեւալ օրը մի փոքր աւելի ծանր զգալով իւրեան, շաբաթ օրը հրաւիրել էր Երեւանից բժիշկ պ. Ե. Եովհաննիսեանին խորհրդի: Պ. Եովհաննիսեանը ոչ մի ծանր հանգամանք չնկատելով հիւանդի դրութեան մէջ, կարեւոր հրահանգները տալուց յետոյ, պատուիրել էր մի երկու շաբաթ տանից դուրս չգալ: Եւ արդարեւ արդէն կիրակի երեկոյեան հանգուցեալը այնքան լու էր զգացել իւրեան, որ ընդունել էր միաբանակիցներից ոմանց և զիւղից այցելութեան եկածներին, որոնք երկար մնալով, զրեթէ առողջացած են համարել նորան և ոչինչ չկասկածելով, բաւական ուշ մեկնել են հանգուցելոյ մօտից:

Մահուան առաւօտ Սրբազանը ժամը 8-ից առաջ դարձնելով քնից, ծառային հրամայել է լուացուելու ջուր բերել և անկողնոյ մէջ լուացուելիս, յանկարծ ուշագնաց է եղել: Մինչ ծառան յետ բերել էր աշխատում Սրբազանին, ներս է մտնում Գեր.

Տ. Եսայի Արքեպիսկոպոսը որ և իսկոյն բժշկի յետեւից մարդ է վաղեցնում, բայց արդէն ուշ էր՝ մի երկու բույէ միայն մի քանի անգամ ծանր շունչ քաշելուց յետոյ Սրբազանն իւր եղբայրակցի զրկում աւանդում է հոգին և վանքի բժիշկը և զեղադործն անմիջապէս հասնելով ստուգում են Սրբազանի մահը։ Այս անսպասելի բոլոր անմիջապէս տարածուեցաւ միաբանութեան մէջ և ամենքն էլ փութացին հանգուցելոյ սենեակը «հոգուոյ» ասելու։ Աւագ լուսարար Գեր. Տ. Մակար եպիսկոպոսը յայտնեց այդ մասին Վեհափառ Հայրապետին և ըստ վանական սովորութեան Մայր Տաճարից լսուեցաւ «երրորդի» ձայնը՝ ի նշան սգոյ և տրամուլեան։

Հետեւեալ օրը նոյեմբերի 4-ին, առաւօտեան ժամը 10-ին, լուսաման կարգը կատարելուց յետոյ հանգուցելոյն զգեստաւորեցին, զրին դադարի մէջ և յուղարկաւորեցին դէպի Մայր Տաճարը։ Այդ տխուր հանգիստը վերջացաւ ժամը 1½-ին։

Ծաշից յետոյ ժամը 3½ եկաւ Երեւանի նահանգական դատարանի դատախազի օգնականը, բերելով իւր հետ մի բժիշկ և հրաւիրելով տեղւոյս դաւառական բժշկին, վանքի բժշկին և զինուորագրութեան համար Ալէքսանդրապոլից եկած բժշկին, թոյլտուութիւն խնդրեց Նորին Ս. Օծուլթիւնից անդամահատելու հանգուցելոյ մարմինը, քանի որ մահը յանկարծական էր եղել և կարող էր զուցէ ապաղայում այլ և այլ կասկածներ թողել տալ։ Որքան էլ անսովոր էր մի սրբազնադործ պաշտօնէի լուսացած մարմինը բժշկական անդամահատութեան ենթարկելը, մանաւանդ որ այդպիսի օրինակ առաջին անգամ էր կատարուելու Ս. Էջմիածնի վանքում, բայց և այնպէս Նորին Սրբութիւնը՝ ցանկանալով որ ամեն մի կասկած փարատուած լինի, բարեհաճեցաւ հրամայել, որ դատախազի օրինական պահանջը կատարուի։ Ուստի և դադարը եկեղեցուց դուրս բերուեցաւ մօտիկ սենեակներից մէկը և անդամահատուեցաւ։ Բժշկների կազմած արձանագրութիւնից երեւեցաւ, որ հանգուցելոյ սիրտը ծարպակալուած է եղել և երկու տեղից ձեղքուած։ այսպիսով հաստատուեցաւ, որ հանգուցելոյ մահը սրտի պայթում

մից է առաջ եկել։ Եւ արդարեւ ամենքին յայտնի էր, որ հանգուցեալը սրտի բարախում ունէր և շատ անգամ նեղուում էր այդ հիւանդութիւնից, շնայելով նորա խիստ չափաւոր կեանքին ուտել—խմելու մէջ։ Անդամահատութիւնից յետոյ հանգուցելոյ մարմինը դարձեալ տարան եկեղեցի։

Հինգշաբթի, նոյեմբեր 6-ին, կատարուեցաւ հանգուցելոյ թաղման կարգը։ Պատարագին էր Գեր. Տ. Մակար եպիսկոպոսը, որ և հանգուցեալին օծեց։ Ս. Պատարագին ներկայ էր ազգիս Վեհափառ Հայրապետը։ Ողջունից առաջ Նորին Ս. Օծուլթիւնը մի դամբանական խօսեց։ Սկսելով կեանքի անստոյգ լինելուց՝ երէկ կարւ այսօր չկայ Վեհափառ Հայրիկը շարունակեց խօսքը Տ. Երեմիա Սրբազանի մահուան յանկարծակի լինելու մասին, թէ ինչպէս նա առաւօտ դարձել է, լուսացուել, հարկաւ փառք էլ տուել Արարչին, որ զիշերն անցկացրեց և առաւօտեան լոյսը տեսնելուն արժանացաւ, սակայն հէնց այն ժամանակ, երբ արեւի լուսոյ ճառագայթները սկսել էին աշտարհս լուսաւորել և կեանք ներշնչել ամենին, նորա արեւը մայր մտաւ։ Սորանով ստուգուեցաւ Ս. Աւետարանի այն խօսքը, թէ մարդ չգիտէ, երբ կը զայ տանուէրը՝ ի մէջ զիշերի, թէ ի հաւախօսի։ Այնուհետեւ մարդկային դատաստանին զաւրով, Վեհափառ Հայրիկը յիշեց աւետարանի պատուէրը՝ մի՛ դատէք, զի մի՛ դատիցիք։ Մարդուս դատաստանը մահից այն կողմը չի անցնում. իսկ մահից յետոյ ամեն ինչ Աստուծոյ դատաստանին կը մնայ։ Ուստի հերք է, ասաց Վեհափառը, որքան դատեցինք Երեմիա Սրբազանին, այս դադարի առաջ ամեն կրքեր ու առեւութիւն պէտք է հանգարտուին։ Գալով հանգուցելոյ կեանքին, Վեհափառ Հայրիկը յիշեց, որ նա զործել է երկար տարիներ Ս. Էջմիածնի մէջ, հարկաւ առանց սխալների չէ եղել, քանի որ մարդուս աչքի մէջ շիւղեր և դերաններ կան։ Յետոյ Վեհափառը յիշեց, որ Տ. Երեմիա Սրբազանը քսան տարուց աւելի Մայր Տաճարի լուսարար է եղել և անշուշտ այդ ծառայութիւնը Աստուած առանց վարձատրութեան չի թողնի։ Իրբեք Սինօգի անգամ ևս նա զործել է,

ասաց Վեհափառը՝ ըստ չափու իւր կարողութեան։ Ի վերջոյ Ս. Հռիփսիմէի վանքի մէջ արած շինութիւնները յիշելով՝ Վեհափառը յայանց, որ կարգադրել է հանգուցելոյ մարմինը ամփոփել նոյն վանքի զաւթի մէջ և մաղթելով Աստուածային զթութիւնն ու ողորմութիւնը հանգուցելոյ համար՝ կնքեց իւր համառօտ խօսքը։

Ողջոյնի ժամանակ Վեհափառ Հայրապետը և ապա միաբանութիւնն և ժողովուրդը ողջոյն առան հանգուցելոյ օծեալ աջից և շարունակուեցաւ Ս. պատարագը։

Ս. պատարագից յետոյ հանգստեան կարգը կատարուեցաւ և հանգուցելոյ դագաղը դուրս բերին եկեղեցոյ։ Վեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ յուղարկաւորել մարմինը մինչև դարբասի դուռը, ուր առաջին հանգիստը տուին։ Երկու յետոյ Նորին Սրբութիւնը մեկնեցաւ և յուղարկաւորութեան զնացքը Դեր. Տ. Սուբիաս Սրբազանի առաջնորդութեամբ հասաւ մինչև Ս. Հռիփսիմէի արեւելեան կողմը, ուր պատրաստուած էր գերեզմանը։ Թաղման կարգը կատարելու միջոցին Տ. Մեսրոփ վարդապետը մի խիստ զգացուած դամբանական խօսեց, զրուատելով հանգուցելոյ գործունէութիւնը Ս. Էջմիածնի բարգաւաճման համար, մանաւանդ հանգուցելոյ տեղապահութեան ժամանակ։

Դերեզմանը կնքելուց յետոյ աշխարհականներից մէկը պ. Աթարեգեան՝ թոյլտուութիւն խնդրելով հանդիսագիր Սրբազանից, մի դամբանական կարգաց։

Այս յուղարկաւորութեան հանդէսը վերջացաւ ժամը 1½-ին և բոլորեքեան հանդիստ մաղթելով հանգուցելոյ հոգւոյն, մեկնեցան Ս. Հռիփսիմէի վանքից և մասնակից եղան Ս. Էջմիածնի սեղանատանը պատրաստած հոգւոյ հացին։

Թաղման հանդիսին Երեւանի Տ. Նահանգապետի կողմից ներկայ էր Նորին Պայծառփայլութեան առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ պ. Յ. Մելիք Աղամալեանը։

Երեւանից եկել էին այդ հանդիսին մասնակցելու հանգուցելոյ յարգողները և Վաղարշապատի ժողովուրդը։

Հանգուցելոյ դագաղի վերայ զրուած էին

հինգ պատի՝ Երեւանի յարգողներից, Սինօղի պրօֆուրօր Կանչելու ընտանիքից, Սինօղի աստիճանաւորներից, Վաղարշապատի հասարակութիւնից և պ. Աթարեգեաններից։



ՅՈՒՑԱԿ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ Տ. ԵՐԵՄԻԱ
ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ.

Հանգուցեալ Տ. Երեմիա Արքեպիսկոպոսը ընդունուել է Ս. Էջմիածնի միաբանութեան մէջ 1862-ի օգոստոսի 20-ին։ Սարկաւադ է ձեռնադրուել 1863-ի նոյեմբերի 2-ին. կուսակրօնութեան վեղար է ընդունել 1864-ի օգոստոսի 15-ին. եպիսկոպոս է ձեռնադրուել 1873-ի ապրիլի 21-ին և Արքեպիսկոպոսութեան պատիւ ստացել 1896-ի ապրիլի 3-ին։

Հայրապետական պարգևներից ստացել է վարդապետական ականակուռ խաչ և պեակի։ Արքայական շքանշաններից՝ Ս. Ստանիսլաւի և Ս. Աննայի առաջին աստիճանները և մի ոսկեայ ագամանդադարձ լանջախաչ։

Հանգուցեալը վարել է հետեւեալ պաշտօնները. 1864 — 1873-ը Մայր Տաճարի կրտսեր լուսարար է եղել. 1873 — 1879-ը՝ Վանական Կառավարութեան անդամ 1873 — 1896-ը՝ Մայր Տաճարի Աւագ լուսարար և 1873 — 1897 ը՝ Սինօղի անդամ։

Երջանկայիշատակ Տ. Մակար կաթուղիկոսի մահից յետոյ մինչև ներկայումս Հայաստանեայց եկեղեցւոյ հօտը խաղաղութեամբ կառավարող Վեհափառ Տ. Տ. Մկրտիչ Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ս. Լուսաւորչի Գահը բարձրանալը՝ 1891-ի ապրիլի 16-ից մինչև 1893 ի սեպտեմբերի 28-ը, Տեղապահութեան պաշտօն է վարել։

Նորին Կայսերական Մեծութեանց Թագադրութեան հանդիսին Նորին Ս. Օճութեան կողմից պատուիրակ է եղել 1896-ի մայիսի 14-ին։

Տ. Երեմիա Արքեպիսկոպոսի մահուան օրը երեկոյեան ժամը 8-ին Նորին Սրբութիւնը ստացաւ Կովկասի Իշխան Կառավարչապետից հետեւեալ ցաւակցական հեռագիրը՝

Իսկոյն տեղեկութիւն առայ Սինօղի ան-

գամ Երեմիա Արքեպիսկոպոսի մահուան մասին հաստատ հաւատացած լինելով՝ որ Չերդ Վեհափառութիւնը յանձին հանգուցեալ Արհայ զրկուեցաք արժանաւորագոյն զործակիցներէց մէկէն՝ Չեղ յանձն եղած հօտը կառավարելում ինձ պարտք եմ համարում յայտնել Չեղ իմ անկեղծ ցաւակցութիւնը:

Գնենքալ Ազիւտանտ Իշխան ԳՈՂԻՍԻՆ:

Ի պատասխան այս հեռագրի Վեհափառ Հայրապետը ուղղեց Սորին Պայծառափայլութեանը հետեւեալ շնորհակալութեան հեռագիրը՝

Մեծ մխիթարութիւն գտնելով Չերդ Պայծառափայլութեան ցաւակցութեան ջերմ զրպացմանց մէջ ինձ հասած վշտի առթիւ՝ Երեմիա Արքեպիսկոպոսի մահուամբ, յայտնում եմ Չեղ իմ խորին երախտագիտութիւնը:

ՄԿՏԻ2 Կաթողիկոս ամենայն Հայոց

Սորին Ս. Օծութեան հեռագրով իւրեանց ցաւակցութիւնը յայտնեցին՝ Շամալուոյ Առաջնորդ Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոսը, Մշակի խմբագրութիւնը և բժշկապետ Նաստարեանը:

Խմբագրութիւնս ստացաւ Բագուից պ. Սաղաթելեանից մի հեռագիր, որով պարոնը խնդրում է իւր խորին ցաւակցութեան և վշտի թարգման լինել Սորին Վեհափառութեան և վանքի միաբանութեան առաջ Տ. Երեմիա Սրբազանի վաղաժամ մահուան առթիւ:

Բարեշնորհ Տ. Մեսրոփը Վարդապետը իւր դամբանականի մէջ յայտնեց, որ շատերը նորան զիմել են հեռագրով և խնդրել իւրեանց ցաւակցութեան թարգման հանդիսանալ հանգուցեալ Տ. Երեմիա Սրբազանի մահուան պատճառով:

Թիֆլիզից մեզ հեռագրում են, որ կիւրակէ նոյեմբերի 9-ին Թիֆլիզի վանքի Աւագ եկեղեցում հոգեհանգիստ է կատարուել, որը իւր ներկայութեամբ պատուել է Կովկասի Կառավարչապետի օգնական Գնենքալ—Լէյտենանտ Փրեյզէ:

Նոյեմբերի 29-ին շաբաթ օրը Թաղէոս և Բարդուղիմէոս առաքելոց տօնին Սորին Բարձր Սրբազնութիւն Սուքիաս Արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետի հրամանի համաձայն դարութեան և աւագ սարկաւազութեան աստիճան տուեց ԼՅմիածին միաբաններից Ծեմարանի Գ. Լսարանի ուսանող Պողոս Զուբարեանին և կրտսեր լուսարար Հմայեակ Եաղրձեանին:

Հետեւեալ օրը նոյեմբերի 30-ին ս. Գալիանէի վանքում կուսակրօն քահանայութեան աստիճան ստացան Ծեմարանական Գարեգին և Ղուկաս սարկաւազները: Երկրորդը վերակոչուեց Բարդէն Գարեգին արեղան ուսանում էր Գերմանիայում, որտեղ փիլիսոփայութեան դօքտորի աստիճան ստանալով՝ վերադարձաւ. ԼՅմիածին ու Գ. Ծեմարանում դասեր ստանձնեց: Բարդէն արեղան մի քանի տարի շարունակ վարում է տպարանական Վարչութեան անդամի պաշտօնը:

Սոցա հետ ձեռնադրուեցան հինգ Գիւղական քահանաներ: Չեռնադրութեան կարգը կատարելուց յետոյ պատարագիչ Գեր. Սուքիաս Արքեպիսկոպոսը նորընծաներին դառնալով բրնարան վերջրեց առաքելի հետեւեալ խօսքերը՝ «բայց իւրաքանչիւր ոք յոր կոչումն կոչեցաւ ի նմին կացէ՛»* և յիշեցրեց իրենց պարտականութիւնները:

Նոյն երեկոյեան Գարեգին ու Բարդէն նորընծաները ստացան արեղայական կոչումն և վեղար:

Նոյեմբերի 29-ին շաբաթ երեկոյեան Հայաստանի առաջին Լուսաւորիչների տօնի առթիւ Ծեմարանի դահլիճում աշակերտական հանդէս կատարուեցաւ:

ՏՊԱՐԱՆ ՄԸՅՐ ԱԹՈՒՈՅ.

Նոյեմբերի 16-ին ս. ԼՅմիածին էր եկել Սոր—Մախիջեանցի Մեծապատիւ Պ. Մանուկ աղայ Տէրիմ—Օղլուեանցը: Ինչպէս յայտնի է, Պարոնը Մայր Աթոռիս տպարանում իւր ծախքով տպագրել է տուել բարեկրօն

* Ա. Կոնք. է. 20:

Լինանուէլ քահ. Նազարեանցի «Պարզ քա-
րողներ»-ի չորս զրբոյիները որոնք շատ զիւ-
րամատչելի են Հայ ժողովրդեան և մանաւանդ
զիւղական քահանաներին՝ իրենց մօքի պար-
զութեամբ և գնով: Մեծապատիւ Պարոնը մի
բարեպաշտ և Աւետարանի կենդանարար սկըզ-
բունքները տարածելու խնդրին վերին աստի-
ճանին նախանձախնդիր մարդ է: Պարոնը, շնայած
որ շատ մեծ կարողութեան տէր չէ, կրկին
Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ
տպարանական ժողովի կարգադրութեան թո-
ղեց 800 ռուբլի որպէս զի վերջինս հրատա-
րակէ ժողովրդեան հասկանալի պարզ քարոզ-
ներ և տարածէ Հայ ժողովրդեան մէջ: Ահա
մի ըստ ամենայնի բարի և քրիստոնէական
զործ, որից մեր բարեպաշտ հարուստները
պէտք է օրինակ առնեն:

ՄԱՏՆՆԱԿԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Դեր. Տ. Սարգիս Ս. արքեպիսկ. նախան-
գամ Սինօզի, ի յիշատակ իւր հանգուցեալ եղ-
բոր Տ. Թովհաննէս քահանայի Տ. Դասպարեան,
նուիրեց Մայր Աթոռի Մատենադարանին
ու թ հաստ ընտիր ձեռագրեր հանգուցելոյ
զրբերից: Ծնորհակալութիւն նուիրատու Դեր.
Սրբազանին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՏՆՆԱԿԱՐԱՆ.

Հայրապետական Դիւանում ստացուեց
Մեծ. Պ. Դրիգոր Զանշեանից, մաքուր թղթի
վերայ տպագրուած Նղրայրական օգնութիւն»
անուն երկհատոր հեղինակութիւնը, և մա-
տուցուեց Նորին Ս. Օծութեան ազգիս
Վեհ. Հայրապետին, որ հրամայեց դասել ի
չորս գրեանց Հայրապետական Մատենադա-
րանի՝ ծագելեայ Դահլիճում:



Պ Ա Ր Ս Կ Ա Հ Ա Յ Թ.

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ

ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԹԵՐԹԻ

Ի Վաղարշապատ.

Ներկայիւս ուղարկում եմ Պատ. Խըմ-
բաղրութեանդ Ա. ի Տէր հանգուցեալ Մնա-
ցական Տէր Թակոյրեանցի իմ ձեռքով գրել
տուած կտակի բովանդակութիւնը, որ իւր
տեսակի մէջ առաջին օրինակելի գործը հա-
մարուեցաւ քաղաքումս և Բ. դաղթականաց
զրութիւնը խնդրելով՝ որ շնորհ անէք Պա-
տական ամսաթերթիդ մօտակայ համարնե-
րում զեանդելու ի գիտութիւն հայ հասա-
րակութեան:

Թուականէս իբր երեք ամիս առաջ, ի
Տէր հանգուցեալ Մնացական Տէր Թակոյրեանց
հաղորդութիւն առնելու փափաղով իւր մօտ
հրաւիրեց ինձ. խոստովանութեան ժամանակ՝
ի միջի այլոց՝ իւր կտակ կատարելու միտքը
յայտնեց՝ խնդրելով որ ի գիր առնէի և ներ-
կայանէի իրեն ստորագրելու և վաւերացնե-
լու վիճակիս Առաջ. տեղապահութեան, ինչ-
պէս կատարուեցաւ իւր փափագնաց համա-
ձայն, որոյ համառօտութիւնը հետեւեալն է:

2000 թուման Պարսից արծաթ զօան
փող քաղաքիս երկու թաղերու երկսեռ ու-
սումնարանաց նուիրեց, 200 Մանկապարտեղ-
ներուն, 100 Վանայ Վարազայ որբանոցին,
300 Փայտակարանի Խանակեահ գիւղի ու-
սումնարանին, 200 նոյն զիւղում բնակուող
իւր Նանա անուն քրոջ, 200 Մուժարար
գիւղի եկեղեցին նորոգելու համար: Ամբողջ
գումարը 3000 թուման. (շուրջ 6000 ռուբլի)
պայմանաւ, որ իւրաքանչիւր ուսումնարան-
ները հանգուցելոյն անուամբ հնգական չքա-
ւոր սաներու տարեթոշակներ և գրական պի-
տոյքները հոգան. Մանկապարտեղներում մի
— մի սան. Վարազայ որբանոցում երկու տա-
րի՝ երկու չքաւոր որբեր պահեն. Մուժարար
գիւղացիք՝ Կածը քաղաքէն տանեն, ապա
թէ ոչ, Խանակեահի ուսումնարանին տրուի:
Նանա քրոջ այնքան ժամանակ որոշեալ
գումարի տոկոսը տրուի՝ մինչև տղայք չա-

փաֆաս լինին որոց յանձնուի որոշեալ գումարն իրրե գրամաղուխ: Սոյն 3000 թուման գումարն գուրս հանելով մնացեալ ամբողջ հարստութիւն (մօտաւորապէս 20,000 թուման) կտակում է իւր Ազիզ անուն տիկնոջ, պայմանաւ որ նորա մահից յետոյ յատկացուի ի կենդանութեան որդեգրած Յովհաննէս եղբոր որդի 16 ամեայ Մարգարին, եթէ վերջինս ողջ մնայ կամ շնորհք ունենայ իւր տարիք առած ժամանակ կառավարելու մնացած հարստութիւնը. ապա թէ ոչ իրաւունք ունին կտակակառարք ապագային միաձայն հաւանութեամբ յատկացնել ազգային բարեկաւարակ հաստատութեանց, որոց որ կամենան: Կտակակառարքն են 1. մահա Սիմոն աղայն թումանեանց, որ այժմ բնակուում է ի Բագու. 2. իւր Յովհաննէս եղբայր և 3. պ. Դրիգոր Մելիք—Աղարեանց քեռորդին որք իրրե ընկեր վաճառականութեան՝ ծանօթ են հանգուցեալի հարստութեան, որոց պարտաւորեցնում է առաջի Աստուծոյ և մարդկանց խղճի մտօք գործադրելու իւր կտակի որոշումները:

Կտակը պատրաստել է յետոյ անցեալ ամսոյ (նոյեմբեր) 29-ին հանգուա ի Տէր հանդիստ խղճով և հանգարտ հոգով: Մարմինը իւր աներանց (թումանեանց տունը, ուր փարձքով էր բնակուում) անէն փոխադրուեցաւ Բերդաթաղի ս. Աստուածածին եկեղեցին: Հեռեկալ օր Պատարաղից եղաւ Առաջ տեղ. հայրն: Հանգուցեալը ծնած էր Ատրպատականի Փայտակարան (Ղարաբաղ) գաւառի Խանակեհաճ Դիւղում ուսեալ չէր, այլ իրրե սրամիտ և հեռատես անձնաւորութիւն զիւղական անձուկ շրջանը ձեւելով մտնում է Դալիթէի ծառայական և առեւտրական զանազան շրջանները, որոց ի ընէ բնդունակ գուլով թումանեանց բարեհամբաւ գերդաստանէն յետոյ քաղաքումս առաջին տեղն է զբաւում: Ամուսնացել էր թումանեանց եղբարց Ազիզ անուն քրոջ հետ. տարիքը 65-ի հասել է թէ հասնէր ունեցել էր զաւակներ, բայց ամենքն անչափահաս տարիքում մեռած: Ժառանգորդներն ամենից շատ սիրել էր իւր Յովհաննէս եղբոր որդի Մարգարին, որոց յատ-

կացուց իւր ամբողջ կարողութիւնը՝ յետ մահաւան Ազիզ ծիկնոջ:

Հանգուցելոյն գովելի գործն այն է, որ լիազոր արտօնութիւն է տուել կտակակառարներին հսկելու Մարգարի վարուց վերայ և պարտաւորեցնում է նրանց առաջի Աստուծոյ, խղճի և իրենց պատւոյն, որ թոյլ չի տան փչացնելու իւր արդար քրտանց արդիւնքը, առանց մի օգուտ ընծայելու ազգին և իւր ժառանգորդներին: Վերջին խօսքեր արտասանած ժամանակ լացաւ և ապա շարունակեց այսպէս. «Տէր հայր, զաւակներ էլ ունեցայ, բայց մեռան. այժմ մեռնում եմ անորդի, բայց ազգի չքաւոր զաւակներն էլ իմն են: Կար ժամանակ, որ ես էլ չքաւոր էի, փառք Աստուծոյ, այժմ հարուստ եմ. ցանկանում եմ ազգիս դպրոցական չքաւոր ուսանողներին բաժին հանել և թող ուրախութեամբ վայելին. սրանով միայն խորհեցի հանգիստ խղճ՝ պատրաստել և ապա մեռնել, զի հանգիստ խղճով էլ չահած եմ չափաւոր հարստութիւնս, և ինչ»:

Անցեալ ամսոյ 30-ին հանգուցելոյն մարմինը քաղաքիս երկու թաղերու երկսեռ աշակերտաց, ուսուցչաց և բազմաթիւ հանդիսականաց ներկայութեամբ յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ վայելուչ եղանակաւ: Դազաղը զարդարուելով զանազան հաստատութեանց կողմանէ, նուիրեալ պսակներով՝ յետ աւարաման պատարաղի փոխադրեցաւ Լիլիվայ Եկեղեցոյ բակը, ուր և ամփոփուեցաւ ի հող տապանի:

Իրրե կտակադիր և ծխատէր քահանայ, պարտք զգացի հանգուցեալի կտակի և կենսագրութեան համառօտութիւնն զնել լրագրական ասպարէզի վերայ, որպէս զի օրինակ առնուն ուրիշներ էլ՝ որք իրենց ժլատութեամբ անյիշատակ մեռնում են, զի հանգուցեալն ևս ի կենդանութեան փոքր ինչ ժրլատի համբաւ էր հաներ. սակայն խնայողութեամբ հաւաքած գումարէն, առատօրէն սերմանեց ուսումնարանական պատրաստ և պարարտ անդաստաններում, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի:

Յիշենք մեր զրկեալ եղբայրներին.

Անցեալ ամսոյ 24-ին վիճակիս առաջ:

Տեղապահ Տէր Եովսէփ Ժ. վարդապետի հրամանաւ այցելութեան գնացի քաղաքէս վեց ժամու հեռաւորութիւն ունեցող Սեհրիւլ Մուշարար և Ալէմիլք գիւղերում ցրուեալ դաղթականացի որոց մարդկային հոգեւոր և մարմնաւոր ամեն միջութարութիւններից զուրկ գտայ. սրանով ողորմած ազգայնոց կարեկցութիւնը հրաւիրում եմ իրենց նմանեաց վերայ որոնք այժմ անասնային վիճակից աւելի վատթարացին դրութեան ենթարկուած են. խսկաւ զուրկ բնակարաններիէ, օդէ և սնունդէ աշնան տերեւներու նման գեղնած և թօշնած, մի ուժով քամու են սպասում որ վար թափին: Անհուն շնորհակալութիւնս քաղաքիս հայ հասարակութեան, որոնք ցայսօր նոցա չորարեկ հացի պէտք կըցին հոգալու բայց «ոչ միայն հացով կեցցէ մարդ» ասելու է մեր Փրկիչ: Շնորհակալ եմ նոյնպէս քաղաքիս տիկնանց ընկերութենէն, որոց յիշելոց վիճակից տեղեկութիւն տալուս պէս, փութացին 250 թումանի չափ ուտեստ, պատասպարանք և զանազան նիւթեր պատրաստել և ի մօտոյ ուղարկել յիշեալ գիւղօրայք, որ յոռաջիկայ ձմեռս ցրանց չկտորուին թշուառները:

Առ այժմ այսքան լուրեր հաղորդելով Պատուարժան Խմբագրութեանդ, կը խոստանամ ուրիշ առթիւ գրելու:

Մեամ և այլն....

Ա. քան. Շաղոյեանց.

Դալիքի 1897 թիկս. 3.

ՏԱԳԱՀԱՅԹ.

Մեր Տաճկահայ եղբայրները վերջին արիւնահեղ դէպքերից յետոյ այժմ՝ կարծես թէ սթափուել են: Առօրինի գեղաժպիտ ափերից սկսած մինչև ամիրաների մայրաքաղաքը՝ Պաղատա, նկատելի է մի բուռն գործունէութիւն, դէպքերի բերմունքի համաձայն կեանքը վերսկսելու համար: Առօրեական, անտեսական, և վերջապէս կրօնական վարչական խնդիրներ, Սուլթանի Իրիսեան խնձոր Ստամբուլի օրինակով արձագանք են գտնում նոյն իսկ յետին գաւառական քաղաքներում: Հետզհետէ դպրոցները բացուում են, լուծուած ժողովները՝ վերակազմուում: կարծես թէ քաղաքները մըր-

ցում են միմեանց հետ վերջին կոտորածների արիւնով մկրտուած անտէրունչ որբերին խնամելու համար: Ընորհիւ սրբազան Պատրիարքի և Արքեպիսկոպի թեմերը, վիճակները և վանքերը, մէկը միւսի կտակից կանոնաւորուում և հովիւների հովանաւորութեան են յանձնուում: Աւրախալի է այս բոլորը, ուրախալի է մանաւանդ այն տեսակէտից, որ այդ լինում է գիտակցաբար: Հիւանդ մարմինը կազդուրելու համար:

ՈՒՍՈՒՄՆԱԳԱՆ. ԽՈՐՀՈՒՐԻ. — Տաճկահայք կրթական գործի դարգացման համար մեծ քանքեր են գործ գնում: Նոքա ունին մի առանձին հաստատութիւն՝ Աւսումն. Խորհուրդ: Այդ Խորհուրդի անդամները պէտք է ընտրուին ամենափորձառու ու սուցիչներից ու մանկավարժներից: Այժմուայ Խորհրդի ատենապետն է Իր. Թորգոմեան: Մեծ ուրախութեամբ կարգացնէր որ Աւս. Խորհուրդը շուտով մի առանձին Յանձնաժողով պիտի նշանակէ ստորին դասարանների համար դասագրքեր կազմելու նպատակով: Յոյս ունենք, որ այդ նպատակի իրագործումը կը յանձնուի կարող մարդկանց փորձառու մանկավարժների որոնք ոչ միայն յարմարաւոր, մանկավարժութեան արդի պահանջների համաձայն դասագրքեր կը կազմեն, այլ և իրենց բունած ուղղութիւնը կը պարզեն ուսուցիչների համար առանձին ուղեցոյցներով, որոնք անշուշտ մեծապէս կը նպաստեն մեր քիչ մանկավարժական պատրաստութիւն ունեցող վարժապետներին: Այդ տեսակէտից մեր աղքատիկ մանկավարժական գրականութեան մէջ աչքի են ընկնում մեր հմուտ մանկավարժ Ս. Մանգինեանի դասագրքերը և ուղեցոյցները, նոյն նպատակով է կազմել անշուշտ Երթ. Ս. քհն. Սահակեանը իւր կրօնի դասագրքերի համար ուղեցոյցներ:

Աւրախալի է տեսնել նաև ձեռագործների այն դարգացումը, մոնաւանդ Ա. Պօլսոյ դպրոցներում, որի մի արգիւնքը նորերո աճուրդի էր զրած 90—100 լիրայով: Յանկալի էր ի հարկէ, որ ուսումնական խորհուրդը ուշադրութիւն դարձնէր դաստիարակչական բարդ գործի բազմապիսի պահանջների վերայ, և վկայականներ չբաշխէր նոցա որոնց համար մանուկ սերունդի դաստիարակութիւնը ոչ թէ կոչումն է և նպատակ, այլ պարագ պիտի խաղալիք և ինչպէս արդարացի կերպով նկատու է Բիւլղանդիտն, դրանով թէ Աւսումն. Խորհուրդը իւր վկայականներ արժէքն է ստորացնում և թէ թերութեւ և անարժան բազմախնդիրների թիւը բազմացնելով, արժանաւոր ուսուցիչների առաջ նիւթական և բարոյական արգիւնքներ յարուցանում:

— Հոկտ. 3-ին Աւսում. Խորհրդի նիստը չկայացաւ ի նշան սգոյ հանդուցեալ Դր. Սերվիշէ էֆ. -ի որ անդրանիկ Աւսումնական Խորհուրդի ատենապետ և երկրագործական մի վարժարանի հիմ-

նազիր եղած էր: Բուզարկաւորութեան ներկայ էին խորհուրդի բոլոր անդամները: Ազգային հիւանդանոցի հոգաբարձութեան և որբանոցի կողմից ևս պատգամաւորներ կային: Սահմանադրութեան վերաբերելի Յանձնաժողովն ևս նիստ չունեցաւ: Սերփիէէ էֆ.-ի յուզարկաւորութեան պատճառով և իւր ներկայութեամբ պատուեց ազգային կանոնադրութեան երիցագոյն հիմնադրի յիշատակը:

— Միացեալ ընկերութիւնը յայտնել է ազգային վարչութեան, որ իւր գոյութիւնը պահպանելու համար 300 ոսկի փոխառութեան է կարօտում:

— Գում — Գալուի գրտի Ս. Վառվառեան վարժարանի օրրոգաց գործած գեղեցիկգորգը 90-100 լիւրա է գնահատուում:

— Աւսումնական խորհուրդը հոկտ. 17-ին որոշեց տարրական նախակրթարանների դասադրքեր պատրաստելու համար մի Յանձնաժողով կազմել:

ԱԶԳԱՅԻՆ. — Հոկտ. 28-ին գումարուած Կրօն. ժողովի շարժական նստի մէջ խօսք եղաւ հետեւեալ խնդիրների մասին:

1. Սրբազան Պատրիարքը յայտնեց ժողովին, որ թափուր վիճակների և առաջնորդութեանց մի ցուցակ է կազմել և պիտի ներկայացնէ խառն ժողովին:

2. Արժ. Գարրիէլ վրդ. Գուլօղլիեանի նամակից երևեցաւ, որ Լիմ անապատի միաբանները շատ թշուառ վիճակի մէջ են: Արժ. նամակագրի ասելով լեթե պատրիարքարանէն օժանդակութիւն չհասնի ս. մենաստանիս այսօր կայ ս. անապատս: Վաղը չկայ: Այսքան իմացէք, որ փոքր միջոցէ մը ետեւ ըստ աւերակաց պիտի դառնայ: Տէրն Ինք այց առնէ ս. Տանս:

3. Հիւանդանոցի 9 անդամներից միայն Կիւլպէնկեան Պատրիկ և Աւճեան Մարգար էֆ.-երն են պատասխանել ս. Պատրիարքին: Այս սառնութիւնը ամբարբեր է մեծարդշ էֆ.-երի համար:

4. Սահմանադրութեան վերաբերելի Յանձնաժողովի Հոկտ. 14-ի նստին մէջ կարգացուցան նախ տպագրեալ սահմանադրութեան յօդուածները և ապա Ստեփան փաշայի նոր ծրագրի համապատասխան յօդուածները: Վերջինս ներկայ անդամների իրաւացի նկատողութիւնների համաձայն փոփոխութեան ենթարկուեցաւ: Բայց այս մեծ գործը շատ դանդաղութեամբ է առաջ գնում: չգիտենք ինչ պատճառով: մինչև այժմ 1 յօդուած են միայն մշակել, որ հնի 12-ին է համապատասխանում: Այլ և այլ կողմերից եկած դիտողութիւնները կամ քննութիւնները յանձնած են Յանձնաժողովի ձեռնհաս օրէնսդէտ անդամներին:

— Վիճակագրութիւնից երևում է, որ Եզիպոտոսից և Բուլղարիայից Կ. Պօլիս վերադարձող զաղթականների թիւը, 12,400-ից աւելի է:

ՈՐՐԵՐ. — Տաճկահայերը ազգային նախանձանդը-

րութեամբ վառուած, բազմաթիւ որբանոցներ են բանում և անհատական, ընդհանուր զոհարերութիւններով պահպանում են այդ բարեգործական և մարդասիրական մեծ հաստատութիւնները: 'Նոքա զիտակցարար կիսում են իրենց հացը թշուառ եղբայրակցի հետ: Օրինակելի է մանաւանդ մեղձուսահայոց համար: Պաղատի հայերի օրինակը որոնք՝ շնայելով իրենց աննախանձելի նիւթական կացութեան, Տիարպէքիւրի առաջնորդարանից որբեր են խնդրել որդեգրելու համար: Այսպէս՝ երբ Տաճկաստանում աղքատը իւր լուծան, հարուստը իւր ոսկիները չէ խնայում իւր նմանների համար: մերուսահայ՝ մանաւանդ Բագուեցի միլիօնատէրերը, Կիւնիկեան սառնութեամբ ախանափես են լինում իրենց թշուառ եղբայրակիցների յուսահատական դրութեան, և ոչ մի բարոյական միջոցի չեն դիմում նոցա կացութիւնը բարւոքելու: նոցա կեանքը ապահովելու համար, Եթէ որբանոցներ, այրիատներ և այլն չունինք, զոնէ ունենայինք բարեսիրտ քրիստոնեայ հայեր, ջերմեռանդ մայրեր, որոնք փոխանակ իրենց միլիօնների վրայ թուխս նստելու բարհաճէին մէկին որդեգրել և իրենց հաշուով դաստիարակել տալ, և շահել Աստուծոյ արքայութեան համար, չէ՞ որ դրանով կազատէին նոցա փողոցային կորստական վիճակից, չէ՞ որ այդպիսիներին տուած մի բաժակ սառն ջուրն անգամ մոռացուելու չէ: Լրջութեամբ մտածենք մեր կարօտ եղբայրների ներկայ դրութեան և այն միջոցների մասին, որոնցով կարող ենք մեր նիւթականից մի շնչին մաս զոհելով, նոցա վշտերը ամօքել, նոցա արտասուքները սրբել:

— Մալաթիայի առաջնորդարանը Հիւսնի — Մանսայից 20 որբեր է ուղարկել պատրիարքարան, որոնք և հասել են Կ. Պօլիս:

— 25 Տիարպէքիւրցի որբեր ապաստանել են Զ. Սիւսնիոյ յայտնի որբանոցում: Ս. Պատրիարք Հայրը յանուն Տ. Ն. Ծ. Վ. Ասլանեանի տրուած զոհունակութեան թղթով, 13 որբ աղջիկներ ևս Պօլսից է ուղարկել ըստ խնդրանաց տեղական վարչութեան:

— Վանում բացուեցաւ մի նոր որբանոց, ուր կարող են առ այժմ ապաստանել (մօտաւորապէս) 100 սաներ, ըստ յայտարարութեան Վարդի բարձրապատիւ վանահօր:

— Վարդի որբերի թիւը առայժմ հասնում է 30-ի: Վանի միսիօնարաց երկսեռ որբանոցը Փոքր — Աօիոյ ամենամեծ որբանոցն է, 160 տղայ և 80 աղջիկ ուսանում են այդտեղ: Աղջիկները յաճախում են տեղական ամերիկական աղջկանց ուսումնարանը, իսկ տղաները մինչև կէս օր պարապում են ուսմամբ: իսկ ճաշից յետոյ դերձակութիւն, կոշիկակարութիւն, հիւսնութիւն և տարազագործութիւն են սովորում: Տղայոց գպրոցի մի

ահագին շինութիւն է իւր բոլոր յարմարութիւններով, ճաշարանով, մառանով, փուռով, բաղնիքով և ամբարով. շուտով մի որբանոց ևս կը հաստատուի Կարմրուորի մէջ:

— Լուսաւորչի վանքում ևս (Կարնոյ մօտ) մի որբանոց պիտի հաստատուի:

— Խարբերդի որբանոցի շինութիւնը վերջացել է: այդտեղ կարող են ապաստանել 50 որբեր:

— Տիարպէքիւրում բացուելիք որբանոցի մէջ առ այժմ պիտի խնամուին 25 որբեր: Որբանոցը պէտք է պահպանուի Պատրիարքից ուղարկած 10 ոսկով և տեղական միջոցներով:

— Թօփիանէի կայսերական նպաստամատոյց յանձնաժողովի կողմից Սեպուհ էֆ. Տէմիրճիպաշեան Սրբազան Պատրիարքին 22,500 ռ. յանձնեց ի նպաստ կարօտեալներին:

— Բիթլիսից 5 որբեր ուղարկուել են Կ. Պօլիս:

— Պաղատտի հայերը որդեգրելու համար Տիարպէքիւրի առաջնորդարանից որբեր են ուղեւ. արժ. Տ. Եղեկիէլ Վ.-ը ուղարկել է 5—10 տարեկան 8 աղջիկ և 3 տղայ:

— Կ. Պօլսից Ագրիանուպօլսոյ որբանոցը ուղարկուեցան 20 որբեր:

ԳԱԽԱՌԱՅԱՆ. — Ս. Պատրիարքին և Կրօնական ժողովին այժմ ամենից աւելի զբաղեցնում են առաջնորդական և յաջորդական խնդիրներ: Մի քանի սրբազաններ և վարդապետներ յանձն չեն առել այլ և այլ թեմեր և վիճակներ երթալ. Նորին Ամենապատուութիւնը իւր նորընծայ սաներին է ուղարկում անպաշտպան հօտի բաղմապիսի կարիքները հոգալու: այսպիսի աղէտալի ժամանակներում: Մեր հոգեւոր հարց այդ անտարբերութիւնը մեր կարծիքով աւելի քան դատապարտելի է: Ս. Պատրիարք Հօր փանքով շատ փանքեր վերստին չէնանում են և սկսում իրենց պատմական գերբը ապաստան տալով և խնամելով որբերին և հոգալով նոցա նիւթական և բարոյական զարգացման մասին:

— Ճանիկի միւթեւարիֆութեան մէջ մի նոր առաջնորդութիւն հաստատուեց:

— Վարագայ վանքի վանահայր Տ. Ստեփ. Ծ. Վ. Աղազագեան Վանի առաջնորդական տեղապահ է ընտրուած: Նախկին Առաջն. տեղապահ Տ. Արսէն Վ. վերադարձել է Աղթամարի կաթողիկոսական տեղապահութեան պաշտօնը շարունակելու:

— Ալաշկերտի և Պայաղիտի տեղապահ Մամբրէ Վ. մեկնել է իւր պաշտօնատեղին:

— Դերձակեան Տ. Եղիա Ծ. Վ. մեկնեց Գաղատիա:

— Աղթամարի Կաթողիկոսի 1250 ռ. զրամը չգիտնէք ի՞նչու են պահում: Կաթողիկոսի մահուանից յետոյ այդ գումարը գտնուում էր Վանի ա-

ռաջնորդարանում մի երկամեայ անգուկի մէջ: զըրամի բանալին Բագրեւանդի Տ. Սահ. Ծ. Վ.-ի մօտըն էր և միւսը Տ. Արսէն Վ. ի. Յայտնի է որ այդ գումարը կտակուած է Աղթամարի Աթոռի ժառանգաւորաց զպրօցի համար:

— Վարագայ խաչի տօնին եկեղեցական փառաւոր հանգէս է կատարուել Վարագում մեծ բաղնիքում: ուխտաւորներ են եղել: ի թիւս որոց և կար կուսակալի օգնական հայազգի Յովհաննէս Քէրիտ էֆ.:

— Եգիպտոսի առաջնորդական տեղապահ Տ. Յ. Տ. Վ. Աշոտ՝ խզիվից սիրալիր ընդունելութիւն գտաւ:

ՊԵՏՐԻՐԵՐ. — Պր. Հէր Մեքքս, որ Հ. Կոստանի մասնագէտ քննարան է, ս. Պատրիարք Հօր սովորական զբաղումներից ազատ ժամերին պարապում է նրա հետ ս. զրօց ասորերէն բնագրի և հայերէն թարգմանութեան համեմատութեամբ:

— Հոկտ. 29-ին Պարսից շահի ծննդեան տարեգարծի առթիւ պատրիարքական փոխանորդ Տ. Գաբրիէլ Տ. վ. Սմբատ Տ. վ.-ի հետ դեսպանատուն գնալով, ս. Պատրիարքի կողմից շնորհատուում են Նորին Արեգակնափայլութեան տօնը:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ. — Լոնդոնում գտնուող Հ. Վեոնդ վ. որ հայ հռոմէական է, Նորից նամակ է գրել ս. Պատրիարք Հօր, թախանձելով որ իրեն մայրենի եկեղեցւոյ ծոցը ընդունի: Նորին բարձր Սրբազնութիւնը խնդրագիրը յանձնել է Կրօնական ժողովին:

— Եգեսիպոյում գերմանական որբանոցի վարիչները 1,500 ոսկու մի ընդարձակ շէնք են գնել և անպատասպարան կանանց յատկացրել, ուր նոքա զանազան արհեստներով պիտի զբաղուին:

— Արմաշի զպրեմանքի արեղաները հետեւեալ վարդապետական շարագրութիւններն են ներկայացրել ծայրագնութիւն ստանալու առթիւ 1. Տ. Թաթուլ ար. Դուրեան՝ Յովհ. սարկ.-վարդապետ. 2. Տ. Փառէն ար. Մելքոնեան՝ Ներսէս Հնորճայի. 3. Տ. Վահրիճ՝ ար. Շահլամեան՝ Յովհաննէս Երզնկացի. 4. Տ. Թորգոմ ար. Գրիգոր Մագիստրոս. 5. Տ. Գնէլ ար. Գալէմբէրեան՝ Սիւնեաց զպրօցը:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ե Ր.

ՔԱՂԱՅԻՐ Ի ԿՈՆՏԱՆՍՆՈՒՆՈՒ ՎԵՇԵՓԸՆՈՒ ՀԱՅՐԵՊԵՏՈՒ.

Կոնստանդ Օրհնութեան յանուն տ. Վարդապետ Բանանեան ի Մոսկվա վասն նուիրե-